

են քարաշէն սենեակներ մանաւանդ հարաւակողմն, որն բնակարան կրօնաւորելոցն և որն զանազան պիտոյից համար, հարաւային պարսպի տակն է և այդին վանուց, որ մինչև հիմայ ևս «անապատի բաղ», կասուի. որոյ մէջն է ընկուզինի մի «մարգարտի ծառ», կոչեցեալ յանուն կուսի որումն հիւսիսային պարսպի տակն է գերեզմանոցն կուսանաց ուր կան յիսնաչափ գերեզմանք, որոց երկուքի արձանագրերն զրի առի, որք են «Մ. յս է տապան Փանիկէի դուստր Ընուժէին փոխեցաւ առ Քրիստոս թըվով ՌՆՂԸԲ», «Մ. յս է տապան Պետրոսի դուստր Կռաթին փոխեցաւ առ Քրիստոս թ. ՌՆՂԸԲ»:

(Շորոշուիւնէի):



ԹԷ ԻՆՉՊԷՍ ԿԱԶՄՈՒԵՅԱՒ ԷԱՅՈՅ ԱԶԳԸ

(Զ. Բ. Էն Տնայրոյ):

5) Մեր ազգի մէջ մտան և խառնուեցան նաև բաղմաթիւ Յոյներ: Ինչ որ վերը ասացինք Պարսիկների մասին, նոյնը հարկաւոր է կրկնել և Յոյների մասին, —

ներէն երկու դեռաթիթիթ չքնաղ աղջիկներ, երկու տարւոյ չափ զաղտաբար կպահէ գերեմք իւր տան մէջ. յայտնի լինելէն յետոյ խօճայ Խառունմն գիւղի միւս խօճաների հետ վրէժխնդրութեան հնար մտածելով, զիշերուան մի մէջ տաճկաց մղկիրթն այնպէս կործանել և յատակել կտայ, որ նշանն անգամ չերևի. ձայնն նասիջեւանի Զանդ Քեարիմ խանին հասնելով կհրամայէ խեղդել խառունմն. Գիւղի հիւսիսակողմն կան ցարդ ևս խօճայ Խառունմի աւերակ տներն. իսկ ստորերկրեայ կամարակապ «գէրզամբիրն», դեռ անվնաս:

Թէպէտ մեր պատմագիրները և մանաւանդ Մովսէս Խորենացին չեն յիշում մի առանձին դիպուած որ Յոյները մեծ բազմութիւնով գաղթած լինէին Հայոց երկիրը, բայց ի նկատի ունենալով Հայոց և Յունաց մէջ եղած սերտ յարաբերութիւնները, որոնք երբեմն բարեկամական էին և երբեմն թշնամական, այլ և այն որ շատ անգամ և Հայերին յաջողումէր յաղթել Յոյներին և բազմաթիւ գերիներ խլել նոցանից, մենք համարձակօրէն կարողենք ենթադրել, որ արդարև շատ Յոյներ մտան մեր ազգի մէջ և խառնուեցան ժողովրդի հետ: Պակաս չէ և վկայութիւնը նոյն իսկ Յունաց պատմագիրների մէջ: Չամչեանը՝ քաղելով Ստրաբոնից, Մեմոնից, Պլուտարքից, Ապպիանից ևն. հաղորդումէ մեզ թէ՛ «Տիգրան երկրորդը, աւարտելով պատերազմը Պաղեստինու հետ, յարձակուեցաւ Կապադովկիայի վերայ, տիրեց բոլոր երկրին և 30000 մարդ գերի առնելով ուղարկեց նոցա Հայաստան: Աւերեց նա նմանապէս Յունաց տասնեւերկու քաղաքը և նոցա բնակիչները, որպէս է Մաժակ քաղաքի (յետոյ Կեսարիա) բնակիչները տարաւ և բնակեցրեց Տիգրանակերտում (իւր շինած նոր քաղաք) և ուրիշ տեղերում»⁽⁴³⁾: Մովսէս Խորենացին նոյնպէս յիշումէ Տիգրանի պատերազմը Յոյների հետ և նորա յաջողակ յաղթութիւնները, բայց ըստ իւր համառօտութեան մանրամասնաբար չէ որոշում թէ՛ ասնուեցա՞ն արդեօք գերիներ և թէ՛ որքան էին նորա⁽⁴⁶⁾:

(43) Չամչ. պատ. հատ. Ա. եր. 226:
 (46) Մով. Խոր. զեբք Բ. եր. 88:

6) Մեր անդի մէջ մտան և խառնուեցան մինչև անգամ Ղ'ենաստանից եկած գաղթականներ: Զ յիշելով Օրբէլեանց ցեղը, որոնք՝ ինչպէս պատմումէ Սաեփաննոս սրենեաց եպիսկոպոսը (47)՝ եկան Վերիստոսից առաջ թէպէտ ուղղակի Վրաստան և այն տեղ հաստատեցին իւրեանց բնակութիւնը, բայց յետոյ ցրուեցան և շայտատանի գաւառներում, մանաւանդ Սիւնեաց երկրում, ուր տիրեցին շատ տեղերին և խնամութեամբ խառնուեցան շայերի հետ, — չիշելով, կրրկնում մեմ, այս զիպուածը, ուշ դարձնենք այն գաղթականութեան վերայ, որով Ղ'ենաստանից եկան ուղղակի շայտատան: Մովսէս Խորենացին՝ երևի թէ ծանր նշանակութիւն տալով՝ իւր պատմութեան մէջ նուիրումէ այս գաղթականութեան մի ամբողջ գլուխ և պատմումէ այսպէս:

« Եթէ ուստի և զիարդ ազգ Մամիկոնէից:

« Վ խնամակալ Երտաշտի որդւոյ Սասանայ, թողու զթագաւորութիւնն Պարսից որդւոյ իւրում Շապուհի: Ի սորա աւուրս եկեալ ի շայսնախնի ազգին Մամիկոնէից յարեւելից հիւսիսականէն ի քաջատոհմիկ և ի զլսաւոր աշխարհէ և ամենայն հիւսիսականաց ազգաց առաջին, ասեմ իսկ զՂ'ենացն՝ որ ունին զրոյց այսպիսի:

« Յամս կատարման կենացն Երտաշտի, Երբոկ ոմն Ղ'ենբակուր, որպէս ասի ի նոցա լեզուն պատիւ թագաւորութեան. սորա երկու դայեկորդիք Բղղոխ և Մամզուն անուն կոչեցեալ, մեծ նախարարք: Եւ շարախօսեալ Բղղոխայն զՄամզունայն, հրամայեաց թագաւորն Ղ'ենաց Երբոկ սպանանել զՄամզունն: Չոր իմացեալ Մամզունայն, ոչ զայ ի կոչն արքայի, այլ փախուցեալ աղիւն իւրով անկանի առ Երտաշտի Բաբաւորն Պարսից: Եւ Երբոկ հրեշտակս առաքէ խնդրել զնա. և ի չլսելն Երտաշտի, պատերազմ ի վերայ նորա յօրինէ թագաւորն Ղ'ենաց: Եւ իսկոյն մեռեալ Երտաշտի, թագաւորէ Շապուհ:

« Երդ՝ թէպէտ և ոչ տայ Շապուհ զՄամզուն ի ձեռն տեառն իւրոյ, այլ և ոչ յԵրեաց երկիրն թողու, բայց ամենայն աղիւնն իւրով առաքէ զնա, իբրև վտարանդի, առ զործակալս իւր որ ի շայս . . . :

« Իսկ Մամզունայ յոչ կամաց եկեալ յաշխարհս մեր, հանգիպեցաւ զալստեանն Տրդատայ. և ոչ դարձաւ ընդ զօրս Պարսից, այլ ամենայն աղիւնն իւրով ընդ առաջ զնաց նմա մեծաւ պատարագաւ. և Տրդատ ընկալաւ զնա, բայց զկնի իւր ի պատերազմ ոչ էառ յերկիրն Պարսից. այլ երբ որդի աղիւնն նորա և ուժիկ ի կերակուր. փոփոխելով տեղ ի տեղ ոջէ ցրովանդակ ամս, (48):

Պատմագրի վերոյբերեալ խօսքերից երևումէ որ երրորդ դարու վերջերում Զիւնաստանցի մի երևելի իշխան փախելով իւր հայրենիքից եկել է շայտատան: Եւ յս

(47) Պատմութիւն Տան Սիոսկան Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի, տպագրութիւն Պ. Էմիլի, Մոսկուա, 1861 ամի, զԼ. ԿԵ. եր. 271 և հետեւալք:

(48) Մով. Խոր. զիրք Բ. եր. 162—163:

անցքի առեղի մանրամասն և ճիշտ պատմութիւնը առաջ է բերում Սերէոս Ապիսկոպոսը: Աստուծէ:

“... Այլ յետ նորա (Արտաշի) պայազափ նորին զնոյն ձև օրինադրեն զՄամիկոնէիցն սաղա աղգաց զնեղութիւնն: Քանզի ոչ են սըբա (Մամիկոնեանք) որդիք աղգածնինն Արամանեկայ, այլ են եկեալ ի Ղենաստանէ յամս Արտաւանայ արքայի Պարթևաց և մեծին Խոսրովու արքային Այոց. որպէս լուայ⁴⁹) յանէն մեծէ՝ որ եկեալ էր հրեշտակութեամբ ի Ղենայ թագաւորէն առ արքայն Խոսրով, յօր իմ⁵⁰) հարցեալ ի դրանն ար-

(49 և 50) «Լուայ», «իմ», և հետեւալ խօսակցութիւնը չպէտք է վերաբերուն ինքն իսկ Սերետին, որովհետև ինչպէս պարզ երևումէ շարունակութիւնից, այդ շարունակութիւնը հեղինակը առաջ է բերում ուրիշ պատմադրից, մանաւանդ որ Սերէոս Ապիսկոպոսը, եօթներորդ դարու հեղինակը, չէր կարող խօսակցութիւն անել Ղենաստանցի գեապանի հետ, որը եկել էր Խոսրովի մօտ, որովհետև մենք ունեցել ենք երեք խոսքով — առաջին կամ մեծ՝ հայր Տրդատայ երրորդ դարու վերջերում, երկրորդ Խոսրով՝ որդի Տրդատայ չորրորդ դարու մեջերում, և Խոսրով երրորդ՝ նոյն դարու վերջերում և հինգերորդ դարու սկզբներում: Թէպէտ Սերէոսը այս գլխու սկզբում գնումէ այսպիսի խորագիր: «Արդ՝ թէ պիտոյ է քեզ ով ընթերցասէր, երկրորդիցից ի պատմագրացն Մովսիսի Խորենացոյ և Ստեփաննոսի Տարօնացոյ հաւաստի և ճշմարիտ մատենագրայ՝ զորդի ի հօրէ ճանաչել», բայց որովհետև վերոյբերեալ քաղուածքը նման չէ Խորենացու խօսքերին, հաւանական է կարծել որ Սերէոսը առաջ է բերում Ստեփաննոս Տարօնացոյ խօսքերը, որը երևի թէ ժամանակակից էր Ա. Խոսրովին և որի դրուածը գեռ չէ գտած: Պէտքէ իսկոյն նկատենք և այն, որ Սերէոսի յի-

քունի՝ եթէ «Աղդ մի մեծ ի Այաստան երկրի կայ՝ զորմէ ասեն եթէ ի ձերմէ աշխարհէն զնացեալ են», — Այլ նա ասաց ինձ. «Ասեն, ասէ, զուսանք և ի մերում աշխարհին յերգս իւրեանց զՄամիկն և զԱրնակն արս երկուս լեալ քաջս և զըլխաւոր եղբարս հարազատս, որդիք Ատոնամայ նախարարին՝ որ էր երկրորդ ի թագաւորութեանն Ղենաստանի: Որոյ մահուանն առնս այսորիկ առ զկին սորին թագաւորն նոցին ի կնութիւն: Այլ եղև ի նմանէ որդի՝ որ զկնի մահուան հօր իւրոյ յաջորդեալ նստաւ յաթոռ հայրենի թագաւորութեանն: Այլ նոքա երկու եղբարք նորա ի Վօրէ, և ոչ ի հօրէ, ապրտամբեալ ի քաց կացին ի նմանէ. և միաբանեալ ընդ ինքեանս զմասն մի ի նախարարացն և ի զօրացն՝ առնեն ուխտ միաբանութեան: Որոց խորհեալ խորհուրդ չարութեան սպանանել զեղբայրն իւրեանց՝ զԹագաւոր աշխարհին Ղենակուր, և առնուլ զԹագաւորութիւնն նորա:

«Այլ զօրաժողով ինէին Մամիկն և Արնակն ի վերայ նորա ի միում տեղուոյ աշխարհին իւրեանց, և բաժանի զզօրս աշխարհին յերկուս: Աղդ լինի Ղենակուրի դուժարէ և նա զօրս իւրոյ կողմանն՝ և գնայ ի վերայ նոցա ի պատերազմ. և յարձակին ի վերայ միմեանց՝ հարկանեն սրով սուսերի, և սպառեն զզօրն ապստամբական:

չած Ստեփաննոս Տարօնացին չէ այն Ստեփաննոս Տարօնայի կամ Տարօնցի պատմադիրը, որը աւելի յայտնի է Ստեփաննոս Ասողկի կամ Ասողկի անունով և որը ծաղկեցաւ մետասաներորդ դարում:

“Փախստական լեալ Մամիկն և Աոնակրն՝ զնան առ արքայն Արշակունի որ նստէր ի Բասչլ Շահաստանի՝ յերկիրն Վուշանաց: Եւ էր խաղաղութիւն ի մէջ երկոցուն թագաւորութեանցն այնոցիկ:

“Յայնժամ մեծաւ աղերսիւ խնդրեալ զնոսա Ղենքակուրի յարքայէն Պարթեւաց. “Օ, ի բարձցէ ի միջոյ, ապա թէ ոչ՝ լուծցի ուխտ խաղաղութեանն որ ի միջոյ մերում, ,: Իսկ նորախնայեալ յարարն, ոչ ետ զնոսա ի ձեռս նորա. այլ զրէ առ նա սիրով. “Անդրէն ուխտ խաղաղութեան մերոյ (ասէ) հաստատուն կացցէ ի միջի մերում, զի երգուեալ եմ առ նոսա զի նոքա մի մեռցին, այլ ետու տանել զնոսա ի մուտս արևու և յեզր երկրի՝ ի տեղին յայն, որ արեգակն ի մայրն մտանէ ⁵¹), ,:

“Յայնժամ հրամայէ արքայն Պարթեւաց զօրաց իւրոց տանել զնոսա զզուշութեամբ մեծաւ՝ կնաս և որդեգրի իւրեանց և ամենայն աղիւիւն իւրեանց, յերկիրն Հայոց առ ազգական իւր արշակունի՝ որ էր թագաւոր Հայաստան երկրին, որ և սերեալ Բաղդասան յոյժ և եղին յազգ մեծ ի Մամիկոնայ և ի Աոնակայ. յայսմանէ այն է սպարապետ , , ⁵²):

Մովսէս Խորենացու և Սեբէոս Եպիսկոպոսի խօսքերից պարզ երևումէ որ եր-

րորդ դարու վերջերում պատահումէ Չինաստանում մի ծանր ապստամբութիւն թագաւորի դէմ և ապստամբոյնքը հաւածուած լինելով փախչումեն իւրեանց զլեաւոր իշխանի և զրդոզի առաջնորդութեամբ Պարսկաստանի կողմերը, բայց այնտեղ ևս հանդիսա չգտնելով՝ դալիս են Հայաստան: Ասակած չկոյ որ Մամիկոն իշխանը և թագաւորի եղբայրը, կամ ըստ Սեբէոսի Մամիկ և Աոնակ իշխանները, (նոյնպէս թագաւորի եղբայրներ) չէին կարող թողնել իւրեանց ընտանիքը և մերձաւոր մարդիկը, այլ և իւրեանց կողմնակիցները, զո՛հ բարկացած թագաւորի ձեռքին և փախչել միայնակ, առանց պահապանների, առանց զօրութեան, և կատարել այնպիսի երկարատե ձանապարհորդութիւն: Խորենացին ակնարկումէ այս ասելով՝ “փախուցեալ աղիւիւ իւրով, , ուր “աղիւիւ , , պէտք է հասկանալ ոչ միայն իբրև տան կահ և կարասիք, այլ և իբրև ամբողջ ընտանիք, ծառաներ և մերձաւոր մարդիկ: Այսպէս է հասկանում և Պ. Լշմինը, թարգմանելով նոյն բառը Ռուս домочадцы (Ղոմօչատցի) բառով, որ նշանակումէ ընդոճիւնք: Այս կարծիքը առաւել ևս հաստատումէ Սեբէոսի տարեգրութիւնը, ուր անյայտ, բայց Ղենաց ղեսօպանը իւր աչքով տեսնող և իւր բերանով նորա հետ խօսող, հեղինակը ասումէ. “ . . . հրամայէ արքայն Պարթեւաց զօրաց իւրոց տանել զնոսա զզուշութեամբ մեծաւ՝ կնաս և որդեգրի իւրեանց և ամենայն աղիւիւն իւրեանց յերկիրն Հայոց:

Ղենաստանցի գաղթականները մտան Հայաստան նոյն իսկ միջոցին, երբ Տրդատ-

(31) Վերջին խօսքերը առաջ են Խորենացուց, որը նոյնպէս գրումէ, “Եւ յէ (Շապուհ) առ թագաւորն ձենաց՝ ասելով . . . հաղածեցի զնա յաշխարհէս իմմէ յեզր երկրի և ի մուտս արևու, որ հաւասար է նմա մահու, (զիրք Բ. եր. 162):
(32) Սեբէոս Եպիս. Բագրատունեաց, սպագ. ի Պօլիս, ի 1851 ամի, եր. 28—30:

առ Հռովմայեցոց զօրքի օգնականութեամբ հարածեց Հայաստանի սահմաններից Պարոնիկները և խլեց հայրենական թաղը և գահը յափշտակողների ձեռքից. Իմանալով Չինաց գաղթականների գալը՝ Տրդատը մեծ պատուով ընդունեց նոցա և խոսոյն նշանակեց նոցա համար բընակութեան տեղ և ոռձիկ կամ սնունդ, բայց կամենալով փորձել նոցա հաւատարմութիւնը՝ մի քանի տարու ընթացքում անդադար փոփոխումէր նոցա տեղաբնակութիւնը: Իսկ երբ Ալիունեաց նախարարութեան Աղուկ նահապետը ապրստամբեցաւ Տրդատի դէմ և երբ Մամգունը՝ կատարելով թագաւորի ցանկութիւնը, զնաց Աղուկի մօտ և բարեկամ ձեւանալով դաւաճանութեամբ սպանեց նորան, այն ժամանակ Տրդատը տուեց նորան Աղուկի կամ Ալիունեաց սեփական երկիրը—Տարօն դաւառը³⁵⁾ իբրև վար-

ձատրութիւն նորա հաւատարմութեան փոխարէն: Չինաստանցիք՝ հանգստանալով մի տեղ՝ շուտով սկսան ամիլ և բազմանալ. այս վկայումէ և Սերէոսը, «... Ուր և սէրէալ Բաղճայան յոյժ և եղևն յապգ Բժ ի Մամիկոնայ և Աոնակայ Ղենաստանցի գաղթականները շուտով կորցրին իւրեանց ազգային յատկութիւնները և բոլորովին խառնուեցան Հայերի հետ. Սուրբ Գրիգոր Լուսաւորչի քարոզութեան ժամանակ նոքա ընդունեցին քրիստոնէութիւնը առանց հակառակութեան: Ինքն Մամգունը ըստացաւ նախարարական պատիւը և արտօնութիւնները, որը ժառանգեցին նորա որդիքը և թոռունքը և կազմեցին առանձին նախարարութիւն «Մամիկոնեանք», անունով: Արքա ստացան և սպարապետութեան կամ Հայաստանի զօրքերի ընդհանուր հրամանատարութեան շքեղ պատիւը, որը մնաց երկար ժամանակ Մամիկոնեանց ցեղում իբրև ժառանգական իրաւունք: Այնպէս շուտով ենթարկուելով Հայկական տարրի ազդեցութեան՝ Ղենաստանցիք ինքեանք ևս ազդեցութիւն ունեցան նորա վերայ. կարելի է ասել որ նոքա մտցրին ժողովրդի մջ առանձին ազգասիրութիւն և հաստատութիւն հաւատի մջ, որուհետև Մամիկոնեանց ամբողջ ազգը երևելի հանդիսացաւ թէ իւր հաւատարմութեամբ առ տէրութիւնը, թէ իւր ազգասիրութեամբ և թէ իբրև քաջ ախոյեան և պաշտպան Հայաստանեայց Արկեղեցոյ հաստատութեան:

(35) Աւերը մենք տեսանք որ նոյն Տարօն գաւառը Ա. Ազարշահը տուեց Հնդկաստանցի գաղթականներին. Պէտք է ասել որ Ա. Ազարշահից մինչև Տրդատը անցաւ համարեա 500 տարի, և թէպէտ Հնդկաստանցիք դեռ ևս պահպանել էին իւրեանց Հնդկականութիւնը հաւատի սովորութիւնների, դէմքի և դուցէ լեզուի կողմից, բայց տէրութեան աչքին նոքա ասելի չէին համարում գաղթականներ, այլ իբրև Հայ ժողովուրդ. և որովհետև նոքա չկազմեցին առանձին մեծ նախարարութիւն, այլ երկիրը գտանուումէր Ալիունեաց նախարարութեան ձեռքին և մանաւանդ որովհետև նոքա պատերազմով հակառակութիւն ցոյց տուին Ս. Գրիգոր Լուսաւորչին և թագաւորական զօրքին, Տրդատ թագաւորը հեշտութեամբ կարող էր տալ Տարօնի գաւառը Չինաստանցի գաղթականներին և նոցա իշխանին:

7. Մեր ազգի մէջ մտան և բազմութիւն Աւրացիք: Ոչ մի ազգ այնպիսի սերտ յա-

բարեբուծիւն չունէր Հայերի հետ, ինչպէս Արացիք, գուցէ թէ իրաւացի կերպով համարուելով իբրև մի ճիւղ Հայոց ազգի, այս ազգը միշտ մի տեսակ որդիական հնազանդութիւն էր ցոյց տալիս Հայոց ազգին, մանաւանդ սկզբներում, համարեա միշտ նորա դաշնակից էր և զինակից: Այս յարաբերութիւնը աւելի ևս ամրացաւ քրիստոնէութեան ներդրածութեամբ մինչև այն աստիճան, որ Արաստանի եկեղեցին ստորադրուումէր Հայոց Աթողիկոսների իշխանութեան և կառավարումէր Հայոց Աթողիկոսներից կարգած և օծած Աթողիկոսներով մինչև վեցերորդ դարու վախճանը: Այնպէս զուգընթաց են և կապած այս երկու ազգի պատմութիւնը, որ չէ կարելի բաժանել նոցա և ուսանել մինը առանց միւսի: Հայերի ազգեցումթիւնը Արաց վերայ երևումէ մանաւանդ լեզուի մէջ, ուր համարեա թէ երեքից երկու մասը Հայկական բառեր են և կամ Հայկական արմատներ:

Թէպէտ պատմագրութեան մէջ, ոչ մեր և ոչ Արաց, չեն յիշած յականէ անուանէ զիպուածներ, որ Արացիք խումբ խումբ դաղթած լինեն Հայաստան և այն տեղ խառնուած լինեն Հայերի հետ, բայց այս հազիւ թէ կարող է կասկածելի լինել, ինչպէս և Հայերը յետոյ բազմաթիւ խումբերով դաղթեցին Արաստանի երկիրը:

Մենք չենք յիշում այստեղ Արաբացիների և Թաթարների դաղթականութիւնները կամ մասնակցութիւնը Հայոց ազգի կազմութեան մէջ, որովհետև նոքա շատ ուշ էին և Հայոց ազգը այդ միջոցին

չունէր աւելի զօրութիւն կլանել նոցա և միացնել իւր հետ:

Այսպէս ուրեմն մեր ազգը, ինչպէս և բոլոր ազգերը, բաղկացաւ, կազմուեցաւ զանազան մասնաւոր ցեղերից: Սոցա մէջ սկզբնական և զլսաւոր մասնիկներն էին երկու, առաջին՝ տեղական բնակիչներ, եկաց Հայաստանի կողմերը զեռ Վաբիլոնեան աշտարակաշինութիւնից առաջ, և երկրորդ՝ նոյն աշտարակի քանդուելուց յետոյ եկած մի ցեղ: Այս վերջինս աւելի բազմաթիւ լինելով և աւելի հզօր՝ իշխեց տեղական բնակիչների վերայ և յատկացրեց իւր անունը նոր բաղադրած ազգին³⁴): Միւս ցեղերը թէպէտ ինքն ըստ

(34) Մեր ազգը կրումէ շատ անուններ. Հայք, Արմէնք, կամ Արամեանք, Թորգոմեանք, Ասրանագեանք, Յարեթեանք, Սոմէիք, Թէպէտ մեր հեղինակները ընդունում են իբրև անկասկածելի ճամարտութիւն որ այդ անունները յատկացել են ազգին զանազան նահապետներից, բայց մեր ազգի անուանակցութեանց ծանր խնդիրը զեռ ևս կարող է պատմաբանական և բառազննական (Ֆիլոլոգիական) ամենանորը քննութեան և հետազոտութեան: Առ այժմ այսքանը միայն անկասածելի է, որ վերոյիշեալ անուններից միայն երկուսը կարող են համարուել իսկապէս յատուկ անուն մեր ազգի, այն է՝ Հայք, որը գործածելի ժողովրդի և լեզուի մէջ, և Արմէնք, որ գործածուածն օտար ազգիք աննշան փոփոխութիւններով: Բայց արժանի է ուշադրութեան և Սոմէիթի և Սոմէիք անունը. Արացիք երբէք չեն կոչում մեզ Հայք կամ Արմէնք և ոչ մեր երկիրը՝ Հայաստան կամ Արմէնիա, այլ Սոմէիս և Սոմիսէթի: Այս բառս ծագումէ Արաց Սոմիսէի բառից, որ նշանակումէ Հարա- ուրեմն ըստ աշխարհագրական տեղագրութեան Հայաստանի--վերաբերութեամբ առ Արաստանն Արացիք մեզ կոչում են Հարասիս, որպէս և մենք նոցա վիրք, վերինք, Հիւսիսայինք:

ինքեան բաւականին բազմութիւն էին, զօրօրինակ Հրէաները, միգացիք, բայց համեմատաբար զլուսւոր ցեղի հետ աննշան էին և մտան նորա մէջ իբրև երկրորդական մասնիկներ: Բայց մեր և օտար ազգերի կազմութեան մէջ այն տարբերութիւնն ենք տեսնում, որ ուրիշ ազգերի կազմութեան ժամանակ այս կամ այն ցեղը աւելի հզօր լինելով քան թէ միւս ցեղերը կամ թուական բազմութեամբ և կամ արտաքին՝ Ֆիզիքական և ներքին՝ բարոյական և մաւաւորական զօրութեամբ, ներգործումը միւս տեղերի վերայ, տալիս էր նոցա իւր սեփական յատկութիւնները, և կլանելով նոցա փոքր առ փոքր կազմումներ, ձուլումէր նոր ամբողջութիւն, նոր ազգ՝ իւր յատուկ բնութիւնով և ուղղութիւնով: Իսկ մեր ազգի կազմութեան ժամանակ մի և նոյնը կատարուել է շատ նուազ կերպով: Բոլոր ցեղերը արտաքին կողմանէ իբր կազմելին մի ամբողջութիւն— Հայոց ազգ, և ճանաչելն իւրեանց վերայ մի հասարակաց գերազոյն իշխանական կամ արքայական իշխանութիւն, բայց ներքին կեանքի մէջ երեւացել է միշտ զարմանալի բաժանողութիւն: Իւրաքանչիւր ցեղը կարծես թէ միշտ ձգտումէր դէպի մի կողմը, միշտ աշխատումէր դուրս պրծնել ընդհանուր շաղկապից: Մորա պարզ և համոզեցուցիչ ապացոյցն է նախարարութեանց գոյանալը, նոցա կեանքը և պատմութիւնը, իսկ հետեանքը եղաւ նախարարական իրաւունքը: Ըստ մեծի մասին նախարարութիւնները գոյացան առանձին ցեղերից, որոնք ունեւրով առանձին իւրեանց տեղադրութիւն և ցեղապետ, միայն արտաքին կերպով

հնազանդումէին ընդհանուր իշխանութեան: Այսպիսի դրութեան շատ ձեռնտու էր լինում և Հայաստանի աշխարհագրական դրութիւնը, չկային մեծ և նաւազնաց գետեր և ընդարձակ ցամաք ճանապարհներ, որոնք այնպէս շուտով միացնումէն դրացի ցեղերը, ընդհակառակն բարձրադիր լեռները շատ դաւառներ համարեա բոլորովին անջատումէին միմիանցից: Այսպիսի դրութիւնից առաջ եկաւ այն նախարարական իրաւունքը— պահել իւր զօրքը, ժողովել իւր ժողովրդից հարկը, վարել դատաստանը, և այլն— որը այնպիսի մեծամեծ փնասներ պատճառեց ազգի ամբողջութեան ⁵⁵) լեզուի անմշակութիւնը, բազմութիւն գաւառական բարբառները, պատերազմում ըստ մեծի մասին յաղթած լինելը, ազգի սակաւութիւնը և անհաճութիւնը, ժողովրդի աղքատութիւնը և տգիտութիւնը, և այլն,— այս բոլորը մասամբ իւրիք հետեանք են և բաղադրիչ ցեղերի թոյլ և նուազ կապակցութեան:

Աւերջապէս, թէ որքան թոյլ էր այդ կապակցութիւնը, երևումէ այն հանգամանքից, որ Աուխու շրջակայում փնացել է մինչև այսօր մի բուռն ժողովուրդ, որոնք կոչւումէն Ուտէացիք և որոնք պահպանելն իւրեանց ցեղական լեզուն կամ բարբառը, որը շատ տարբեր է մեր լեզուից և աւելի նման է, ինչպէս և նոցա դէմքը և կազմուածքը, Աովկասեան լեռնականներին լեզուին: Արդարև զարմանալի փաստ, որ ա-

(55) Մի ժամանակ առանձին կիսօսնիք նախարարական իրաւունքի և նորա իրաւաբանական նշանակութեան վերայ:


ևելի քան թէ երկու հազար տարու ընթացքում մի մասնաւոր ցեղը բոլորովին չէ խառնուել և չէ կորել ազգային ամբողջութեան մէջ, այլ մնացելին մի քանի բեկորներ, որոնք պահպանելն և իւրեանց լեզուն 36):

Վստահան լաւագոյնս Ռասայամբան:


Վստահան լաւագոյնս Ռասայամբան:

(36) Այս յօդուածը գրելու ժամանակ մենք բաւականացանք միայն մեր ազգային աղբիւրներով: Մի և նոյն բնաբանը— թէ ի՞նչպէս կամ ի՞նչ ցեղերից կազմուեցաւ Հայոց ազգը— կարող է լցնել ամբողջ հատորներ, ի՞նչ ինչորը քրնտի բազմակողմանի կերպով, այն է՝ պատմաբանական, աշխարհագրական, բառազննական և առհասարակ հնարասութեան հետազոտութիւններով, և այս բոլորը ոչ միայն ազգային, այլ և օտար ազգի աղբիւրների օգնականութեամբ: Նորերումս յայտ եկաւ մի նոր աղբիւր, որը զուգէ ժամանակով գործէ մեր հին պատմութեան մէջ մեծամեծ հեղափոխութիւններ, եւ ակնարկումեմ բնական կամ «եզայն» արձանադրութիւնները, որոնք գտանւում են Հայաստանի շատ տեղերում: Պ.


Մորտմանի գիւղերին, որոնց հետ ծանօթ են «Արարատի», կարգացողները, մենք գեուես չենք կարող ընծայել կատարեալ հաւատ, մինչև ուրիշ նորա նման գիտնականները, չստուգեն նոցա բազմաթիւ հետազոտութիւններով: Մենք մեր յօդուածը գրելու համար ունէինք երկու նպատակ, նախ՝ յարուցանել մեր նոր փատնազրութեան մէջ ծանր և ուսումնական քրննութեան կարոտ ինչորներ, երկրորդ՝ մեր միւս գրուածներից շատերը հիմնուած են այն գլխաւոր ենթադրութեան վերայ որը յայտնեցինք սոյն այս աշխատութեան մէջ, այն է թէ մեր ազգը կազմող մասնիկները ունեցան շատ նուազ միաւորութիւն:



Չարդ Մայր Եկեղեցւոյն Ընդ.



Մեծ եկեղեցու շքանշանի և խորանի պատկերը



Թ Յ Ա Ն Ո Ւ Ն Ն Ն Ն
 Է Ա Չ Ո Ղ Վ Ա Ն Կ Վ Մ
 Ը Լ Ն Յ Վ Ա Ն Կ Ո Ր Դ
 Ի Ն Ո Ր Ր Վ Ա Ն Կ Ք
 Կ Ի Կ Ա Ն Դ Ի Ց Ի
 Չ Ի Ա Ա Չ Ա Մ Ա Ա

Խորանի և շքանշանի պատկերը